Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ

*Սիրելի Դերենիկ,*

Բացի պաշտոնական դիմումս՝ գրում եմ եւ մասնավոր ձեւով: Փարիզում հրատարակվող թերթը և մանավանդ ժուռնալը պետք է այն վայրը լինեն, ուր հանդիպելու են իրար Հայաստանի և արտասահմանի այն գրողները, որոնք անվերապահ կերպով փարած են Խորհրդային Հայաստանի գաղափարին: Այս նպատակին հասնելու գլխավոր պայմանը մեր այդտեղի գրողների կենդանի աջակցությունն է, առանց որի դժվար թե բան դուրս գա: Մանավանդ կարևոր է մեր այն անկուսակցական գրողների աշխատակցությունը, որ ծանոթ են արտասահմանին: Այս տեսակետից շատ անհրաժեշտ է քո աշխատակցությունը: Հույս ունեմ, որ դու չես ծուլանա եւ ամենաեռանդուն կերպով կաշխատակցես ինչպես մեր թերթին, այնպես էլ ժուռնալին: Շատ լավ կլիներ, եթե դու ուղարկեիր մեզ այնպիսի պատմվածքներ ու ֆելիետոններ Խորհրդային Հայաստանի նոր կենցաղից վերցված, որպիսիքը պարբերաբար տպում ես «Խորհրդային Հայաստան»-ում: Նաեւ ցանկալի էր ստանալ քեզանից հոդվածներ տեղիդ գրական-գեղարվեստական անցուդարձի մասին: Մի խոսքով հույս ունեմ, որ դու ամենայն եռանդով կանցնես աշխատանքի:—Հիմա մասնավոր զրույց:

Վենետիկում հանդիպեցի Իսահակյանին: Մի ամիս միասին էինք: Ամեն օր հիշում էինք քեզ: Շատ հաճելի մարդ է բնավորությամբ: Գրում է «Ուստա Կարոն», որ, եթե նման լինի իր պատմածին—վիթխարի գործ է լինելու: Բայց վախում եմ, որ նա ավելի լավ պատմող է (բերանացի), քան արձակագիր: Դե գործը կվերջացնի—կտեսնենք: Հանձնարարել էր գալուս քեզ բարել իր կողմից— ընդունիր այս որպես այդպիսին: Ես նրան մեծ ոգևորությամբ պատմում էի քո «Դատաստանի», «Քաջ Նազարի» և այլ գրությունների մասին: Նա «Դատաստանդ» չի կարդացել, իսկ «Քաջ Նազարի» միայն վերջին գործողությունն էր կարդացել դասագրքում — շատ էր հավանել, ուղղակի հիացած էր: Դե ես էլ իմ կողմից յուղ լցրի նրա հիացմունքի վրա: Արդեն քո «Քաջ Նազարի» առաջին ընթերցողը և հիացողը — եթե հիշում ես— ես եմ եղել:

Է, սիրելի Դերենիկ, ո՞նց ես, ի՞նչ ես անում, ի՞նչ նոր բաներ ես գրել եւ դեռ ի՞նչ ծրագրեր ունես ապագայի նկատմամբ: Ես շատ կուզեի, որ սրանից հետո մեր նամակագրությունն ընդուներ կանոնավոր եւ պարբերական բնույթ: Այս նամակս ընդունիր որպես դրա պրոլոգը, մնում է որ դու «դամ» պահպանես— կարծեմ այսպես են ասում:

Ես շատ հավանեցի Վենետիկը, Պոլիսը և Փարիզը. Հռոմը և Բեռլինը առանձին տպավորություն չարին վրաս: Սքանչելի էր Նապոլին, Կապրի կղզին, Վեզուվը և Պոմպեին: Աննման գեղեցկություններ են դրանք, հեքիաթային բաներ!

Խնդրում եմ առայժմ այսքանով գոհ ըլլաս: Սպասում եմ նամակիդ և նյութերիդ: Խնդրում եմ մանրամասն գրես այդտեղի գրական-գեղարվեստական անցուդարձի մասին:

Ընդունիր բարևներս, հայտնիր ողջույնս օղլուշաղիդ և համբուրիր իմ տեղը երեխայիդ:

Քո՝ *Չարենց*

Ժամանակավոր հասցե՝

Mons. S. Pirumoffe, Rue Grenille 79, Paris

(Չարենցին)

7 V, 1925, Փարիզ